Ա. ՏԱՐԻ 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1899 ԹԻՒ 12

Վիմա-տպարան Ա. ՄՆՏԻԿԵԱՆԻ — ԳԱՀԻՐԷ

# "ՓԻՒՆԻԿ,,Ի ԾՐԱԳԻՐԸ

ՓԻՒՆԻԿ պիտի հրատարակուի ամիսն երկու անգամ, ամեն ամսոյ 1ին եւ 15ին

1.—Տոհմային կեանքի հին ու նոր պատկերներ, կենցաղական հարցերի վրայ լուրջ ուսումնասիրութիւններ. Հայոց գաղթային հոսանքին վրայ շահեկան տեղեկութիւններ, մանաւանդ Եգիպտոսի հին ու նոր գաղթականութեանց:

2.—Արձակ եւ ոտանաւոր բանաստեղծութիւններ, հեղինակութիւն ու թարգմանութիւն:

3.—Գիտական նորութիւններ, կէս-ծանօթ ժողովրդոց կեանքէն ու բարքէն մանրամասնութիւններ, հռչակաւոր երկրախոյզներու երկերէն քաղուած:

4.—Եգիպտական հնութեանց ու նորութեանց վրայ ուսումնասիրութիւններ, տեղային լուրեր, վարչային ու կրթական խնդիրներու վրայ տեսութիւններ:

5.—Կիսամսեայ ընդհ. քաղաքական կացութեան վրայ հոծ ու ամփոփ տեղեկութիւններ:

6.—Արտասահմանի եւ գաւառական թղթակցութիւններ:

## ՊԱՅՄԱՆՔ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ

| | | | |
|---|---|---|---|
| Եգիպտոսի համար . . . . | Տարեկան . . . | Ֆր. | 10 |
| » » . . . . . | Վեցամսեայ . . . | » | 6 |
| Արտասահմանի համար . . . | Տարեկան . . . . | » | 13 |
| » » . . . | Վեցամսեայ . . . | » | 7 |
| Կովկասի համար . . . . | Տարեկան . . . | րուբլ. | 5 |

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ


Աստղերգ.—Բ.
Կենսագրութիւն Մ: Մամուրեանի: (վերջ)
Պաշտօնական յայտարարութիւն.—ՄԱՄԲՐԷ ՔՀՅ. ՎԱՐԴԱՆԵԱՆ
Կայրը (Նորավէպ):—Ա. ՊԱԼԵԱՆ
Դիւրազդը.—Ս. ԲԻՒՐԱՏ
Կիները.—Թարգմ. ՎԱՀԷ
Արաբկիրի Որբանոցը.—ԵԶՆԻԿ ՔՀՅ. ՊԱԼՈՒՆԻ
Զանազան Լուրեր:



Ձեռագիրները ետ չեն դարձուիր: Կ'ընդունուին ամեն տեսակ ազդեր:
Նամակ, յօդուած և բաժանորդագին պէտք է ղրկել առ Տիար Ս. ԲԻՒՐԱՏ

DIRECTION DE LA REVUE ARMÉNIENNE PHÉNIX
INSTITUTION CENTRALE
LE CAIRE

ՏՆՕՐԷՆ-ԽՄԲԱԳԻՐ—ՍՄԲԱՏ ԲԻՒՐԱՏ

ԵԳԻՊՏՈՍ,
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ.... 10
ՎԵՑԱՄՍԵԱՅ 6

ԲԱԺՆԵԳԻՆԸ ԿԱՆԽԻԿ Է

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ
Ֆր.
ՏԱՐԵԿԱՆ.... 13
ՎԵՑԱՄՍԵԱՅ 7

ԿՈՎԿԱՍ
ՏԱՐԵԿԱՆ Ռուբ. 5

# ՓԻՒՆԻԿ

ԿԻՍԱՄՍԵԱՅ ՀԱՆԴԷՍ
ԱԶԳԱՅԻՆ, ԳՐԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ա. ՏԱՐԻ — 15 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1899 — ԹԻՒ 12

## ԱՍՊԱՐԷԶ

Անիմաստ, յախուռն ընտրողութեան ոգի մըն է որ վերէն վար կը տիրէ առ հասարակ մեր բոլոր անհատական և հանրային գործառնութեանց մէջ։ Ցաւալի է որ վայրկեան մը իսկ չմտաբերուիր անդրադառնալ կարևոր դերին վրայ զոր այս անընդհատ ոգին կը կատարէ մեր կրթական, տնտեսական, եկեղեցական և այլ կարգի ազգային հիմնարկութեանց մէջ, և հետազօտել պատճառները այս վերջիններուն յետադէմ, տարտամ և աննախանձելի վիճակին, ինչպէս նաև այն անյաջողութեանց և ձախողումներուն՝ որոնց ստէպ ենթակայ են մեծ անհատական ձեռնարկութիւնք։

Հարևանցի քննութիւն մը բաւական է՝ համոզուելու համար այն եզրակացութեան թէ՝ մեր անհատական և հասարակական սխալից, դժբաղդութեանց և ձախողուածոց մեծագոյն մասին գլխաւոր շարժառիթն է ասպարէզի սխալ և անյարմար ընտրութիւնը, սա զանազանութեամբ որ մինչդեռ անհատը առանձինն կը կրէ իր անխոհեմ ու անհաշիւ ընտրութեան դառն հետևանքները և ինքն իրեն կը մնայ պատասխանատու. հանրային գործոց մէջ՝ ընդհակառակն՝ հասարակութեան շահերն են որ կը վտանգուին՝ կոչում չունեցող անձերու պաշտօնավարութենէն և անոր բովանդակ պատասխանատուութիւնը կը ծանրանայ նոյն ինքն հասարակութեան վրայ։

Ասպարէզի ընտրութեան մասին այս սանձարձակ խառնաշփոթութեամբ պիտի գայ օր մը որ շատ զարմանալի չպիտի թուի՝ եթէ ժամագործին յանձնարարենք մեր կօշկի ներբանին վրայ կարկտան մը ձգել, կամ մաղերնիս յարդարելու համար դիմենք երկաթի խեչերանք վաճառող խանութպանին։

Եւ միթէ բացարձակ և ծիծաղելի հակասութիւն մը չէ՞ զոր կը գործենք՝ երբ անվերջ անվախճան գանգատներ կը տեղանք մեր ազգային գործոց վարիչներու սխալ ուղղութեան դէմ, առանց սակայն քննելու թէ անոնք իրենց ստանձնած պաշտօնին ձեռնհասութիւնը ունի՞ն, կամ այդ ասպարէզին համար պահանջուած յատկութիւններով օժտուա՞ծ են. երբ կը

դաստափետենք ու գետնէ գետին կը զարնենք մեր կրթական վարիչներու քմահաճ և ապարդիւն անօրինութիւնները, առանց վայրկեան մը խորհելու թէ մեր մանուկներու կրթութեան և դաստիարակութեան վերին հսկողութիւնը յանձնուա՞ծ է բանիբուն, ձեռնհաս և գործէն հասկցող անհատներու ձեռքը. երբ ոտէպ ռումբեր կ'արձակենք կղերականաց զեղծումներուն դէմ և եկեղեցիէն հետ քէն պահելու չափ առաջ կ'երթանք, առանց մտածելու թէ անարժան և կոչում չունեցող անձեր եկեղեցական պաշտօնի բարձրացնելու առաջին սխալը մենք գործած ենք. երբ վերջապէս անվստահութեան և զեղծումի ամբաստանութիւններ յաճախ կ'արձակենք մեր ելմտական վարիչներու երեսն ի վեր, առանց կանխաւ փոյթ տանելու՝ վստահելի, պարկեշտ և ուղղամիտ անձեր կոչել ազգային ստացուածոց մատակարարութեան գործին։

Գաղափարաց նոյն շարքը քիչ մը աւելի ընդլայնելով՝ կը տեսնենք որ յեղափոխական գործին մէջ երեւան եկան և դեռ կուգան այնպիսի ողորմելի անձեր՝ որ ո՛չ կոչում, ո՛չ գիտակցութիւն ունին իրենց յանդգնօրէն միջամուխ եղած մեծ գործին զոր կ'արտատուրեն՝ կեղծ հայրենասիրութեան դիմակին ներքև սքօղուած անձնական շահ և դիւրակեցութեան միջոցներ փնտռելով անոր մէջ։

Այսպէս է նաև մեր անհատական ձեռնարկութեանց մասին. չենք ուզեր որոշ սահմանի մը մէջ ամփոփուիլ և ընտրել մեզ համար այնպիսի ասպարէզ մը՝ որուն կոչում և բնական յարմարութիւն ու տրամադրութիւն ունենանք։ Անհամեստ ու անվերջ տրտունջներ, գանգատներ ունինք մեր անձնական գործերու անյաջողութեան դէմ, վասնզի մեր տարրին, մեր ասպարէզին մէջ չենք գտնուիր։ Վաճառականութիւն, գեղարուեստ, ձեռարուեստ, հրապարակագրութիւն և ուրիշ չեմ գիտեր ի՛նչ, իրար կը խառնենք, ամենքն ալ կը փորձենք, մէկէն միւսին կ'անցնինք ու յաջողութիւնը խոյս կուտայ մեզմէ, զայրոյթի չեշտով կուռփ ու անէծք կ'արձակենք միամտաբար մեր անհամբոյր ու անժպիտ բաղդին դէմ ու կը կարծենք թէ մարդիկ և Աստուած դաշնաւորուած են մեզ հալածելու և անյաջողութեան մատնելու մեր բոլոր ձեռնարկները։

Մամուլը կամ հրապարակագրութիւնը մանաւանդ այս վերջին տարիները՝ արտասահմանի մէջ այնպիսի դիւրամատչելի ասպարէզ մը նկատուեցաւ որ համոզը մէջը ինկաւ ոտքով գլխով, խոտի պէս սկսան բուսնիլ թերթերը որոնցմէ շատերը իրենց տափակ, անհամ ու անլի պարունակութեամբ խոտի կեանքն ունեցան, եղան մինչև իսկ այնպիսիներ ալ որ առանց շէնքով շնորքով ու անխուալ երկու տող բան գրելու կարողութեան կարծեցին թէ քանի մը ձուլուած տառեր, մամուլ մը և գրաշար մը տէրեան ունենալով՝ պիտի կրնան յաջողիլ հրապարակագրութեան դժուարին և բազմապահանջ ասպարէզին մէջ։ Ո՛չ մէկ ժամանակ այսչափ մեծ անկում ունեցաւ հայ մամուլը՝ շնորհիւ մի քանի յանդուգն և շահադէտ բաղդախնդիրներու։

Մեր ցեղային բարքերուն մէջ խորապէս արմատացած այս ձախող դրութեան (ասպարէզի ընտրութեան մասին) դարմանը՝ բոլոր մեզ պէտք է փնտռել մեր վարժարաններէն։ Մեր տոհմային դաստիարակութեան նշանակելի թերութիւններէն մին այն է որ պէտք եղածին և կարելի եղածին չափ փոյթ չ'տարուիր մանկան բնածին տրամադրութիւնները մշակելու

և զարգացնելու և ըստ այնմ պատրաստելու զանի իր ապագայ յարմարագոյն ասպարէզին։ Անհաշիւ և անարամարան ուղղութիւն մըն է կեանքի պայքարին պատարաստել նոր սերունդը՝ առանց որոշապէս անոր առջև գծելու ապրմամբերին յատակագիծը, առանց կանխաւ ցոյց տալու դժուարութիւնները՝ որոնց դէմ պիտի մաքառի և առանց յանձնելու անոր յարմարագոյն զէնքը որով կարող պիտի ըլլայ յաղթական դուրս գալ ճակատամարտէն։ Առանց այս նախահոգ պատրաստութեանց՝ չափահասը, որչափ ալ օժտուած ըլլայ տկան և կորովի նկարագրով մը, երբ չէ՝ մարդուած որոշ ասպարէզի մը համար՝ լոկ յաջողելու եռանդով կեանքի պայքարին մէջ պիտի նետուի այնպիսի ուժգին այլ անխոհեմ թափով՝ որ յաճախ կուրացնորդ զինք կործանարար յանդգնութեան և մինչև իսկ կորսաբեր բաղդախնդրութեան։

Նոր սերունդը իր բնական ձրից և յարմարութեան համեմատ որոշ ասպարէզի մը պատրաստելու ջանքերը՝ վերկարար ներդործութիւն մը պիտի ունենան մեր անհատական և հանրային ձեռնարկութեանց վրայ և յաջողութեան դրուական մը կեանքի պայքարին մէջ։ Բ.

---

# ԿԵՆՍԱԳՐՈՒԹԻՒՆ

## ՄԱՏԹԷՈՍ ՄԱՄՈՒՐԵԱՆԻ

*(Շար. նախորդ թիւեն եւ վերջ)*

Այժմ Մամուրեան՝ իր ազգային գործունէութեան յիսուներ որդ և իր խմբագրութեան 29ամեակին մէջն է։ Անոց տարին թէև հերկած է՝ խորշոմի ակօսներով՝ իր ճակատի ու դէմքի գծեր, և փշալից հողեր, ծանրաբեռ աշխատանք, մանաւանդ սրտի կսկիծներ տեղացած են իր գլխուն ու ծնօտին վրայ ալեոյթի ձիւնը, բայց Մամուրեան կարծես այն ադամանդեայ միտքն ու սիրտն է, որ կը հիննայ, կ'ալեորի, բայց չ'ծերանար, չ'դանդաղիր և տարիներ ուրքան տալի շատ այցելեն խմբագրութեան դռնեն, այնքան կ'առաւելուն նորա փայլն, արժէքն և անդգելի հանգամանքն։ Բաւական է մին կարդալ Շահնուրի վերջին թղթակցութիւնները, և ահա պիտի տեսնէ թէ հոն 70ամեայ Մամուրեանը 36ամեայ երիտասարդէ մ'աւելի եռանդուն, վառվռուն, առոյգ սիրտ և կայտառ միտք մ'ունի։

Մամուրեան աշխարհասէր մարդ չէ, միշտ կը տեսնես զինքն իր աշխատանոց փեթակին մէջ, ինչի մ'աւելի յօրինելու պատրաստած ժիր մեղու, յաճախ թաղուած իր աշխատութեան սենեկին մէջ՝ մաքի շերամի մը նման հիւսելու համար նոր մեսաքս. և երբ ճերմակ պատանքի մը մոտացութեան մէջ անյարիր կը կարծես, յանկարծ կը թռչի նա իր ձիւնեղէն գնդին մէջէն նարափեատ և առուգակեղ թեթեռնիկի մը պէս։ Մինչակ հաստակով, կը քալէ ուղղաբերձ և խոհուն, որոյ քալուածքին, կեցուածքին և խօսուածքին մէջ իսկ կը նշմարես իր անյոգդոգդ կամքին, անծերանալի սրտին և կորովի մաքին շպիտնը՝ որպէս միշտ կ'ընթեռնուս իր գրուածոց մէջ։ Շողմից, նկատմանց տակ անկորանալի մնացած հոգւոյն նման՝ անկորանալի ոգնասիւնի մը վրայ բարձրացած կը տեսնես այն հոյակապ գլուխն ու դէմք, այր գմբեթաձև լայն ճակատն՝ կը ներշնչէ քեզ վսեմ երկիւղածութիւնը զոր կը զգաս՝ Աստուծոյ և մարդկան օրհնութեամբն թնդացող ահեղաշուք տաճարի մը հիացեաց նայած պահուդ։ Իր թաւ և ձիւնածաղիկ յօներից և երկայնատեղ արտանանց ներքև կը տեսնես տակաւին զոյգ մը խայ-

տակն, բոցալիր աչքեր, որ գերազանց խմացականութեան ջուխտ մը փայլակներու նման կը շողան. միշտ երազուն են՝ երբ կը խորհի, ժպտուն՝ երբ կը խօսակցի, պայծառ հայելի սրբախոհ հոգւոյ մի՝ այր վճիտ ու վեհ՝ փայլն ազատած կամ բծոտած չէ երբէք ապօտ կամ նեմ նկնախոհութեան մը ժանգն ու արատն։ Իր խօսակցութեան մէջ աչքեղ չի վրիպիր յաճախ այն հեգնական ժպիտն որ կը փոխէ իր նուրբ շրթունք, այր խօսքեր որբան պարզ լինին՝ սակայն ատակեան ազով համեմատալ են։ Երկայրաբան և խնկաւէտ ակնարկութեամբ լի են իր խօսքեր, ակնարկութիւնք յաճախ երկդիմի, բաղմաճղի և մերթ ընտանի ընկերութեանց կողմանէ շատաչուն քննադատութեան նոր խնձոր, մինչև կորդկան հանդոյցն ինքն լուծէ իր սրտին։ Երդիծանքը միշտ մոտն է իր լեզուին, որպէս հիւպլեան մեղուին քով՝ խայթոցը մեղրին. փիլիսոփայի մը խորհրդաւոր խոհունութիւնն ու սակաւապէտ կենցաղն ունի, պատմագիտի հմտութիւն, բանաստեղծի նկարէն ու ճոխ երևակայութիւն, թուագիտի ճշգութիւն, աստիկեանի բարոյական։ Արարատեանի պատուասիրական կարգին մէջ երկիւղած և յոյժ պահպանողական։ Հիւրասէր և գթասիրտ։ Յաճախ ապրատ մը՝ կը տեսնէ իր ափին մէջ լուսայի մը սոգոսկելն՝ առանց նրշմարելու այն որ շնորհեց։ Տիտոսի չափ կը սիրէ բարերարելն, և յաճախ կը կարմրցնէ զոսոխն որպէս Օդոստոս զկինա։

Զինքն որոնողն՝ կամ տանը մէջ կամ դպրոցին կամ թանգարանին մէջ կը գտնէ զնա՝ դասով մը, գրով մը, դրքով մը պարապած, կամ ընկերութեան կամ ուսուցչի մը հետ խորհրդակցութեան մէջ առաջնորդելու, և քիչ անգամ բարեկամի քով տեսակցութեան մէջ. իսկ երբէք խաղատան կամ գրօսատան մէջ. դի ինչպէս կը յիշեն իր վաղեմի բարեկամը Պոլսոյ մէջ իսկ՝ դեռ թարմ երիտասարդի տիպ լուութեան մէջ ապրած տեսն՝ որպէսզի աշխարհական կենցաղի մոլութիւնք զինքն չ'գրաւեն՝ անապատականի մը նման խցիկի կեանքն ընտրած է։ Յանիոյ երկնից տակ գիշերներն՝ երբ կը տեսնեն զահ մ'որ ամենէն վերջն կը շիջանի, հաստատեցէք որ այն Մամուրեանին է. վերջին թերթը դոցելէ յետոյ կը դոցէ նաև արտանուրը։ Իր տունն աւելի գրատուն մ'է. մինչև ներքնասենեակը ամենուրեք կը տեսնես գիրք, հանդէս, նոր, հին, ազգային, օտարազգի։ Երբապական մամլոյն հմտալից, ամեն նոր հրատարակութիւն կրնաս գտնել իր քով։ Մամուրեան ունի նաև ամեն հայ կեդրոններու մէջ բարեկամներ, որոց հետ ունեցած թղթակցութիւններն իսկ կրնան բաղմահատոր մատենագրութիւններ արժել երենց սրատղին և թանկագին պարունակութեամբն։

Իր սեղանն լուսուլեան չէ, սակայն զգեստուց մասին գոյն ինչ կեսարու ճաշակն ունի։ Եղանակին հետ կը տեսնես ծաղկած և զարեծաղիկն Մամուրեան։ Դա ձեռնոյմեկի մը պէս կը շքուի շիք, և պարզ ակնոցն յաչս, ազարկուն զրչին պէս ճկուն գաւազան մը ի ձեռին, կամ մեռաքսէ հովանոց մ'ի գլուխ, անութիւց ներքև ունենալով կամ գիրք մը կամ թղթի ծրար, կամ հետն ի վեր մտերիմ մը, նորեկ մը կամ բարերարեալ մը, Հռոմի ֆորումէն անցնող պատրիկի մը կամ բառամէնթէն դարձող Հուիկի մը նման, ճանչուն և հատատուն քայլով ծանրախոհ՝ կը ճեղքէ կ'անցնի փողոցին ակօտներն ու խաչուղիները, մերթ մարի կնճիռ մը ճշդելու, կամ դաղափարի ծուռ մը շտկելու ներքին ոգորումնքն ստոգորուն՝ կը տանարէ մատներուն իր տագնապական ընչացքին տէգն և իր ապեքեկ ալիք։ Մամուրեան իր կենաց մէն մի գծերուն մէջ կը գտնես միշտ հրապուրելի, գեղաճաշակ, ընտրող, առոյգ, համա-

կրելը, ընդօրինակելը, աննախանձ, խմաստուն, երբեմն խոյլթիչ՝ այլ ոչ խորտակիչ։ Բայց պէտք չէ գոչելու իր ճշմարտութեան փափուկ թելերուն. թելն արջառաջլի կը փոխուի, և լեզուն սլաքի։ Հպարտ է այլ ոչ գոռոզ։

Մամուրեան իւր բարեհամբաւ, բարեկեցիկ և բարեկարգ վիճակին մէջ, ունեցած է երեք մանչ զաւակ, Վրոյր, Հրանտ և Վահէ. առաջինը մանուկ հասակին մէջ թռած է ծնողական գիրկէն, իսկ վերջինը՝ պատուաղէմ Վահէ՝ երկու տարի առաջ՝ այն է 97ին թօշնեցաւ իւր 22–23 գարունին մէջ՝ ի խոր սուգ և ի կսկիծ թողլով իւր ալեզարդ հօր և սիրասուն մօր սիրտն, ինչպէս և Մամուրեան գերդաստանի բոլոր հեռաւոր և մօտաւոր համակրողները։ Միջին որդին բազեռանդն և հանճարեղն Հրանտ 29ամեայ —Արմենեան Մամբոյ տարեկից— կը մնայ միակ մխիթարութիւն Տեառ և Տիկին Մամուրեանի վշտահար սրտին։

* * *

Մամուրեան ընդունած է այն Զմիւռնուհւոյ մի, և նորա նուիրած է երբ նշանուած էր՝ ասպետական ախոյեան և պղատոնական յանկերգներով լի յառաջաբանովն՝ Վերթէրի թարգմանութիւնը։ Այն որ օժտեալ է Երգ–երգոցի հարսին նման՝ իւր սեռին բոլոր համեստաբոյր և փափկալիծ ձիրքերովը. Այն՝ որոյ նմաններն Հոմերական լեզուն՝ ցան աստուածոյն կը փափկաձայնէ. Այն ժրագլուխ զոր Ս. Գիրքն՝ Պսակ տան կ'անուանէ։ Ամուսինք զերար կ'ամբողջացնեն։ Տիկին Մամուրեան ևս անմասն տաղանդի պեղանի մը չէ։ Թարգմանած է գողարիկ ոճով մը Մանկան մը Յուշատետրը։ Տիկին Մամուրեանի համար կ'ըսեն թէ՝ իր ամուսնոյն բազմաթիւ թարգմանութեանց ծանրատաղտուկ բեռն թեթեւցուցած է, և եղած է միշտ նորա ներշնչող Եգերիան։ Տիկինն ևս Տիարյրին պէս խօսելէ աւելի խորհող է և իւր սեռին և միջավայրին ամեն կըրթական շարժմանց աջակից։ Քոյր է նէ Տիկին Գ. Չիլինկիրեանի, որ նմանապէս Զմիւռնիայի իգական սեռին գործոց դաշտն մէջ՝ իւր մեծանուն ամուսնոյն նման միշտ յառաջընթացն և խիզախն է. անձնական պերճախօսութիւն մը և տիպական նկարագիր մ'ունի, և ընդ հեզն իւր սեռի ակաբութեան՝ պղպջուն կամքի, մըխեալ սկզբունքի և անկախ մաքի տէր անկեղծ, վեհաբարոյ և յոյժ ջերմեռանդ Զմիւռնուհի մ'է։ Եթէ կ'ուզէք մուտանուէր ընտանեայ սոյն ոգւոյն տեսնել, երբ օր մը Զմիւռնիա երթաք, անցէք դէպ 'ի հիւանդանոցի մատուռն տանող Հայոց մեծ փողոցէն՝ ձախ կողմերնիդ կը տեսնէք կասկարայ փանդակով տուն մի, ուր կը բնակի խորհրդաւոր Թագուհին, Ցնծական Հայ Սիբիլան, հոն կը տեսնէք յաճախ դրախտի այս ընտանիքն իրենց ընտանի Ակադեմիան։ Մտէ՛ք անդ և սորվեցէք կրկին՝ նահապետական հիւրասիրութիւն, աւետարանական առաքինութիւն, ողջախոհութիւն, լըրջամտութիւն, խոհեմութիւն, անկեղծութիւն, ընտանութիւն, խորհրդապահութիւն բարեկամութիւն, բարուց ազնուութիւն, սրտի, մաքի վեհութիւն և ամեն ինչ որ գեղեցիկ, բարի և ճշմարիտ է։ Մամուրեանի կեանքն իւր բոլոր պարագայիւք՝ աշխատասիրութեան, յարատեւութեան, անկեղծ արիութեան, բարօրութեան, առաքինութեան, անձնուիրութեան, վեհանձնութեան խաչալի մը մարդկութիւնն է, ուր ազգովին երախտապարտ և որոյ վրայ սքանչանալէ զատ ուրիշ աւելի բարձրագոյն առաքինութիւն չ'կընար ունենալ ճշմարիտ հայասէրն և գրագէտը։

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Պատ. Խմբագրութիւն
Փիւնիկ Հանդէսին

Մաթթէոս էֆէնտի Մամուրեանի ազգային գործունէութեան յիսնամեայ յոբելեանին մասնակցելու համար ի Գահիրէ կազմուած մասնախումբին որոշման համեմատ՝ ներփակեալ կ'ուղարկենք Ձեզ նոյն մասնախումբի պաշտօնական յայտարարութիւնը, խնդրելով որ հաճիք հրատարակել պատուական Հանդիսիդ մօտակայ թուոյն մէջ։

Ողջունելով զՁեզ հայրական սիրով և օրհնութեամբ.

Մնամ աղօթարար
Նախագահ Մասնախումբի
ՄԱՄԲՐԷ ՔՀՆՑ. ՎԱՐԴԱՆԵԱՆ

«Ինչպէս արդէն հրատարակեցին ազգային լրագիրք, յառաջիկայ Նոյեմ. 17/29ին՝ Իզմիրի մէջ պիտի տօնուի ազգային գրականութեան և դաստիարակութեան բազմամեայ մշակ Մամուրեան Մաթթէոս էֆէնտիի, որ արդ ծերացած և բժշկաց խորհրդով աշխատութենէ հրաժարած է, գործունէութեան յիսնամեայ յոբելեանը։

Այս Յանձնաժողով մը արդէն կազմուած է Իզմիրի մէջ Նախագահութեամբ տեղւոյն Ամեն. Ս. Առաջնորդին, որ ամէն կողմ հրաւէր ուղղած է մասնակցելու այդ տօնին. Հայկական Յոբելեարին առ ազգն մատուցած մեծ և կարևոր ծառայութեանց համապատասխան փայլով կատարելու համար զայն։

Ինչպէս ուրիշ քաղաքներու մէջ, նոյնպէս աստ ի Գահիրէ կազմուած է մասնախումբ մը, մեր նախագահութեամբ և մասնակցութեամբ Տեարց.

Մկրտիչ պէյ Մարկոֆֆ
Կարապետ պէյ Ծէրիճեան
Մարտիրոս էֆ. Արիեան
Նազարէթ „ Ալազարմ
Աւետիս „ Ամիրայեան
Գանձայեան, և
Կարապետ „ Նաւասարդեան։

Այս մասնախումբի պաշտօնն է Գահիրէի և շրջակայից Յոբելեարին համակիր գրասէր ազգայիններէն հանգանակութիւն մը կատարել և արդիւնքը նուէր մը ընել Մամուրեան էֆէնտիի, միջոցաւ Իզմիրի մէջ կազմուած Կեդրոնական Պատ. Յանձնաժողովոյ Ամեն. Նախագահին։

Նախագահ

Գահիրէ, 2/14 Սեպտ. 99»

Հաճութեամբ հրատարակելով յիշեալ յայտարարութիւնը խմբագրութիւնս արդար կ'զգայ ջերմագին յանձնարարել Փիւնիկի արգոյ ընթերցողաց որ լիովանդակ եգիպտահայոց պատիւ բերող և մեծանուն Յոբելեարին արժանավայել եռանդով ու գործունէութեամբ քաջալերեն Գահիրէի Պատ. Մասնախումբին վսեմ ձեռնարկն ու նպատակը, իրենց փութկոտ առատաձեռնութեամբ մասնակցելով հանգանակութեան։

---

# ԿՈՅՐԸ
(ՆՈՐԱՎԷՊ)

Հանդիպա՞ծ էք մարդու մը, որ նոր դուրս կ'ելնէ գետնափորէ մը, ուր հազիւ քանի մը ժամ մնացած է. տեսէ՛ք ի՛նչպէս անյագ նայուածներ կը նետէ բոլորտիքը. վերը, կապոյտ կամարին ու պայծառ արևին. վարը, զարդարագունած գետնին, երփներանգ ծաղիկները, վազվզող մանուկները, ժպտուն ու նազելի կիները, ցանկապատ շէնքերը, ճռուողուն թռչունները. ի՜նչ երջանկութիւն. ջերմ համբոյրներով ու ձեռքի սեղմումներով լայն շունչ մ'առած կը գոչէ... «Ո՜հ, սիրելի՛ս, կարծեցի թէ պիտի խեղդուէի»։

Մարդ ինքզինքը աւելի թեթեւ կ'զգայ, կը կարծէ վերածնիլ, սիրար բացուած ու թարմացած, արիւնը՝ նոր ոյժ ստացած, գլուխը զովացած, ծնկերը՝ կազդուրուած. հակամէտ է վազելու, շարժելու խաղալու, կեանքը վայելելու, լիութեամբ ծծելու մանրուք օդը: Եւ՝ թէ հարցնէք իրեն այս յեղակարծ փոփոխութեան պատճառը, անտարակոյս պիտի պատասխանէ. «Գետնափոր մնայ, ուր հինգ ժամու չափ թափառեցայ. ինձ թուեցաւ սակայն թէ՝ հինգ տար անցուցի հոն. կարծեցի թէ՝ պիտի խղդուէի»:

Երբ հարցնողն այս պատասխանը կը լսէ, կը ծիծաղի.— «Այս է եղեր»:

Եւ՝ թէ ո՛չ անտեղի, զէթ չափազանց կը դանէ ա՛յրքան բերկրութիւն, ա՛յրքան խնդամտութիւն, կը կարծէ թէ՝ գետնափորնեբը զուրկ չեն շնչելի օդէն, որ միշտ կը փոխուի օդամուտներուն միջոցաւ. հետևաբար չ'մրմռներ և կը զարմանայ թէ ի՞նչպէս այդ մարդը կրնար կարծած բլլալ թէ պիտի խղդուէր:

Արդարև, խղդուելու այդ զգացումը ո՛չ թէ շնչելի օդին պակասութենէն, այլ սեսոպութեան համեմատաբար մթադնելէն յառաջ եկած է: Դիւրին է ուրեմն երևակայել թէ՝ ինչ անասելի տանջանք է կուրութիւնը . . . . . :

Գայեանէ կոյր էր, բայց ո՛չ ի ծնէ. լաւագոյն չէ՞ կոյր ծնած բլլալ քան թէ վերջէն կուրանալ: Անտառէն բռնուած ու գառադեղի մէջ բռնուած սոխուծն և գառադեղի մէջ ծնած ու հոն սնած սոխուծն եթէ բաղդատութեան դնենք, պիտի տեսնենք որ երկուքն ալ մնչելով խղդու կը ճգնին այն երկաթէ ձողերը, որոց մէջ սեղմուած են. սա տարբերութեամբ սակայն որ վերջինը՝ չէ թէ կորսուած ազատութեան մը կսկծալի յիշատակով, այլ լոկ բնազդումով կը գործէ:

Գայեանէ որ հազիւ 15 տարեկան էր, կուրացած էր ծաղկախտէն, որ անոր զէմքին ալ կեղտուած էր ողորմելի կերպով: Տեսնողը գլուխը կը դարձնէր և քանի մը քայլ հեռուն կը թքնէր: Շատ քիչերուն ուշադրութեան և արդահատանաց կ'արժանանար այն անուշութիւնը, որ խեղճ ազջիկան փոսիկներն ու ակեղութիւնն անհետացնելով՝ անոր երեսը կը լուսաւորէր և ճերմակ աչքերուն որբութեան զրաշմ մը կուտար: Հապա բարեմիտ պառաւ մը հինգ բարանոց մը կը ձգէր անոր մշտաբաց ձեռքին մէջ:

Այս բաղդաւորիին սիրական տեղն էր Մայր-Եկեղեցւոյ զարդացեալ փոքրիկ գրան քովիկը, ուր կը կծկուէր ամեն օր, առաւաւտեան իրիկուն, ձեռնափայտը պատին յենցուցած: Աշակերտները՝ մեծ մասամբ տղքաս, երբեմն ճաշին աւելցուքը կուտային անոր որ անորոշապէս, իսան ի խուսն կը լեցնէր տոպրակի մը մէջ, զոր յետոյ ետին կը դեռեցէր պատին ու կոնակին միջև:

Աւելցուքներն ընդհանրապէս կը կազմէին հացի փշրանքներ ու կտորներ, կիսատ հաւկիթներ, չորցած ձիթապտուղներ, կտրտուած ընկոյզներ, ՀԻՒՕՂ, կրծուած ոսկորներ:

Գալով անուշեղէններու, միսերու, ապուխտի, երշիկի մնացորդներուն, անոնց հոտն անգամ չէր առներ. վասնզի այս տեսակ ուտելիքները՝ շատ անգամ բերողն իսկ չճաշակած՝ կ'անհետանային սեղանատնէն ի հաշիւ, կ'բսուի, այն ժամանակի կառավարիչին, որ երբեմն աշակերտները կ'ստիպէր գարի բերելու իր մեծաշուք անձը կրելու պատիւն ունեցող աւանակի պարարելու համար...: Շատերը կը յիշեն անշուշտ այս սիրալիր կառավարիչը, որ յամենայնի իրեն համեմիտ հոգաբարձութեան մը պաշտպանութիւնը կը վայելէր: Հիմայ ժամանակը փոխուած է, բայց պրոխնեբը...:

Երբեմն ձմեռը՝ երբ սառոյցի անձրևէր կամ ձիւնէր, սեսեսը մէկ ձեռքը Գայեանէին կուտար և միւս ձեռքով ալ անոր տոպրակը բռնելով՝ թշուառուհին ներս կ'առնէր և բովը կը նստեցնէր: Այն իրիկունները աշակերտներէն մին զայն կ'առաջնորդէր մինչև իր՝ Գայեանէի բնակարանին մօտ:

Թէ և գլուցականաց խելահանելէն միշտ կը պաշտպանուէր, բայց իրեն սմենէն աւելի համակրողը Գէորգ Պ. անուն աշակերտն էր. թերևս այն պատճառաւ որ անոր զէմքն ալ աւրուած էր ծաղկախտէ: Արդէն անուրանալի է որ գեղեցիկն ճշմարիտ կարեկիցը դարձեալ գեղեցիկն է: Վարժասան փոքրիկ չարաճճիները կրտսած ըսկշռ կը կոչէին Գէորգ Պ.ն: Այս մարդուկները Գայեանէն ալ կը յանդգնէին յաճախ՝ անոր գաւազանը պահելով, գլանցքէն քաշելով, քթին

պոնդեր տալով, վերջապէս խել մը ապայու-թիւններով։ Սակայն կայրը երբէք չէր բաւ-կանար, ընդհանրապէս կը մնար միայն ժպիտով մը։

Իրենց սանտաձայնէն կը ճանչնար երիտասարդեակ մ՝աշակերտներ, որոնց կարծես հոտ կ՝առնէր։

Սովորաբար դուարթ էր և կը սիրէր կատակարանել։ Յանախակամ՝ կը պատմէր իր չարաղէտ հիւանդութեան մանրամասնութիւնները, այն հիւանդութեան՝ որ զինք դրրկած էր իր ամենամեծ զրամագլխէն։

Օր մը մի քանի աշակերտներ ուզեցին տեղեկութիւն առնել Գայիանէի բնակարանց վրայ, և հասկցան որ կայրը ունէր իր հայրն ու մայրը և փոքրատարի երկու եղբայր։ Ամենքը մէկէն կ՝ապրէին չորս կողմ եղեղով ծածկուած հիւղակի մը մէջ, քաղաքէն դուրս։ Հայրը գինեմոլ էր, մայրը հաշմանդամ։ Ազջիկան մուրացած զրամին մեծագոյն մասը օղիի, և ձեռք անցուցած ուտելիքին լաւագոյնը գինովի կը յատկացուէր, մնացածով ալ իրենք՝ չորսը՝ կ՝ապրէին զրեթէ։ Կիներ՝ որ խիստ գեղեցիկ կրնար անկէն ելլել, կը կարկամէր, միշտ նստած։ Ամենուն հազուստը այլազան կտաւներու հաւաքածոյ մ՝էր, որ անսարակոյս մեծ պարկեշտներ պիտի սատնար աղքատաց իրեղէններու ցուցահանդէսի մը մէջ։ Բայց որովհետև մինչև ցարդ չէ եղած այնպիսի ցուցահանդէս մը և հաւանօրէն ապէ՛ն՝ աչ չպիտի ըլլայ, կարկատուքներու ասանկ հրաշակերտներն ալ անծանօթ պիտի մնան կարգ մը հարուստներու, որոնք լիաբուռն ոսկիներ կը շռայլեն այնպիսի հաւաքածոյից համար, զոր՝ թերևս՝ ժամանակ մ՝ետք նոպկանոք պիտի մերժեն և ուրանան անոնց որդիները։

Գայիանէ ցերեկը մուրալէն ետքը՝ իրիկունը սկսաք եղած ջուրը կը կրէր մօտ աղբիւրէ մը, պզտիկները կը կերցներ ու էր պտուկեցնէր, մայրը կը խնամէր, հօրը դալուն սպասելով. լուացք կ՝ընէր և արշալուսին դուրս կ՝ելլէր դարձեալ երթալ մուրալու համար։ Սակայն կ՝ապատակուէր հօրմէն, որ կեցեր կուտար կնոջը և ոտքին տակ կ՝առնէր պզտիկները։ Եթէ այս թշուառներն ունէին մի փոքր միխիթարութիւն, իրարու համար ունեցած իրենց հզօր և անփոփոխ սէրն էր. չէ թէ կը սիրէին այլ կը պաշտէին զիրար։

Աշակերտները այնքան սովորած էին Գայիանէի որ եթէ օր մը զարս աշխատար՝ ամենուն մտահոգութիւն կը պատճառէր։

Սակայն եղաւ օր մը որ կայրը չ՝երեցաւ. հետևեալ օր նմանապէս, երրորդ օր դարձեալ ոչ ոք։ Աշակերտները կը փոխադրուին մէն մի տան վայրկեանին անուցեալ մին պատարտակաս մը վար կ՝իջնէր տեսնելու համար թէ եկած էր։ Ի՞նչ երբ որոնք կը վերադառնար, պիտի բացատրէին նշանով մը կը պատասխանէր բնակիչներուն իր վրայ յառած աչքերուն, որոնք լի էին անձայն հարցումներով։

Չորրորդ օրը ուրախութեան բացագանչութիւն մ՝արձակեցին երբ զարուց եկած տանտէր՝ դրան բակ, իր սովորական անկիւնը կծկած տեսան Գայիանէն։ Բերանները բացուելու վրայ էին հապարտմէկ հարցումներ ընելու համար անոր նոր բացակայութեան վրայ, բայց տեսնելով կայրին սոփրակոնէն ուելի աւելի զէմքը, արտասուալի աչքերը և անձին վրայ տիրող վհատութիւնը, ապայք արգելուած՝ անշարժ կեցան իրարու նայելով։

Կայրը, երբ թէ զգար իր ազգած կարեկցութիւնը և ուզէր որոնն յայտնուածը թափել։

—Սիրելինե՛ր, բան խեղճուկ ձայնով մը, երեք օր չ՝եկայ, վասնզի... վասնզի մայրս կորսնցուցի...։ Այո՛, մայրս մեռաւ. թաղեցի զայն և պզտիկ եղբայրներս նոր անօգնական, մնացուած հօրս հարուածներուն, հօրդ՝ որ միշտ գինով է... բայց զանէ իւր ազատեցաւ։ Ա՜հ, աղօթեցէք որ Աստուած շնորհք տայ ձեր հայրերուն։

Եւ խեղճուհին սկսաւ լաւ այնքան ուսկրտաւոր կերպով, որ բոլորտիքը շարուած մշտազուարթ պատանեակներուն սիրտ կը կեղեքէր և շատերը կը լացնէր։

Այն օրէն սկսեալ գրրացականներուն տարբերն առ հէր կայրն ուելցաւ. այլ ևս միայն կերակրի ուելցուք չէր արուած, այլ նաև մանր մունր գրամներ, զոր իտալերու հնարք կը գտնէին այն զուգնաբնակ ոսակին զոր ծնողները մերթ կուտային անոնց՝ իրենց զբօսանաց համար։

Անցորդները ա՛լ ահագի կը պժգային նոր-
բահաս մուրացկի աղջիկն՝ գայն ահագի
ապեր գանելով. վասնզի փոսիկներուն մէջ
գրեթէ միշտ արցունք կ'երևէր և վէմքը
թախծալից էր։ Թէ՛ մուրացկատ բլլալ և թէ՛
ոգով՝ անպատի պ կրագրութիւն մ'էլ, և մեծ
հրաշք եղեալ անօգուտեանէ չմեռնին այսպի-
սիները։ Բարեբաղդաբար զարգացականի
մանկական սիրտ անհոգոյներ անհետացած
չեն բոլորովին։

Սակայն Գայեանէ հեզգհեալ կը հիշէր
ու կը մնշէր, յայտնի էր որ մի միայն իր
ոդրացեալ մոր յիշատակը չէր գայն ոչն-
բոգ միշտ։

Արդարև կար մեծագոյն պատճառ մը։

Հայրը՝ բոլորովին ոտնձգեալ կնոջը
մահէն ետքը՝ կարծես մարդկութենէ ալ եկած
էր։ Հիմայ ոչ միայն գիշերները, այլ ցե-
ղերներն ալ կը գինովեար։ Բայց գինեպատար
չուկեր ապատի գրամով թանկագոյնել իր
յաճախորդները, որոց մեծամեծ ծառայու-
թիւններ կը մատուցանէ և կը պահանջէ որ
փոխարէնը կանխաւ գրպանէ։ Գինեպատար
իրաւունք ունի. վասնզի չգիտեր թէ այն
թոյնը գոր կոխիկ ու կոխիկ կը թափէ ա-
գիտց մէջ, ո՛րքան ժամանակէն գերեզման
պիտի տանի այսինչը և որքան ժամանա-
կէն այսինչը. հետևաբար մեծ խոհեմու-
թիւն է ուսակը կանխիկ և իրեն գիմողները
աշխարհիս ցաւերէն որ առաջ ազատելու
միջնորդուն իրը վարձ՝ քիչ բան մ'ալ
ուրի տանել։

Ուստի միշտ գրամ պէտք էր Գայեանէի
հոր և այդ գրամն ալ ինքը՝ կոյր աղջիկը
պիտի հայթայթէր, և որովհետև գրեթէ
միշտ անկարող կը գտնուէր հայրը գոհա-
ցընելու, կը գտնտարուէր ձեռքով, ոտքով,
փայտով։ Խեղճ թերևս գարձեալ այնքան
հոգը չունէր հայրական սիրոյ այդ տարօրի-
նակ արտայայտութիւնները, եթէ գէթ իր
գղակի եղբայրները հանգիստ ձգուէին։ Բայց
ո՛չ, այն անմեղներն ալ իրենց բաժինն
ունէին. հեծեծելով կը պառկէին, հեծեծելով
կ'ելլէին առաուն կանուխ այն ժամուն, ո՛ր
իրենց հասակակիցները խորունկ քնոյ մէջ
են տակաւին, կոկուզիկ անկողիններու մէջ
և՝ ձեռք ձեռքի տուած լալով և աչքերնին
շփելով, կ'երթային մուրալ թաղերու մէջ։

Ահա ի՞նչ պատճառաւ թշուառ-հին հետ-
գհետև կը հիշէր ու կը մնշէր առանց բո-
գոքելու, առանց ճիկ հանելու, առանց
անցորդներուն սիրաբ յուգել փարձելու. որով-
հետև փարձառութիւնամբ գիտէր թէ ոգորմա-
սէրը հեռաբրբիր չէ, իսկ անտարբերը ամեն
բանէ աստ կարծելու բարբարանքին տակ
կը սքօղուի։

Բայց ամեն ինչ վերջ մ'ունի։ Մեր ու-
բրախութենէն և վիշտերուն վերջ ատոգ մը
կայ, որ է՝ Մահ, զոր Լամարթինն չեմ գի-
չոն «Երկնային ազատարար» անուամբ
կ'ոգջունէ։

Իրիկուն մը Գայեանէ՝ երբ հիւսակ գար-
ձաւ՝ չ'ուզեց այն ճուտոգատն, զոր կը հա-
նէին երկու մանկիկները, մի քիչ օգտուելով
իրենց գահճին բացակայութենէն։ Եւ
երբ գուռը հատաւ, չ'գրաց իր վրան շարջը
այն փոքրիկ թևերը որք միանգամ վայրկե-
նի մէջ կը պրուէին հոն. չ'համբուրեց այն թարմ
շրթները, որ իրենցները կը փնտուէին, չ'ժիմնեց
այն երկիւղածուն փափուքը, որ կ'ելլէր այդ
անմեղ բերաններէն՝ երբ հայրը հոն էր.
չ'ուզեց նաև այն անուշակ մը խնդչանը որ
հոգը օրհնաբար կոկորդէն ելլելով նոնար հեր-
կայութիւնը կը յայտնէր։

Սակայն ապահով էր որ ժամանակն ուշ
էր, հիմայ սովորաբար պղտիկները եկած
կ'ըլլային։

Գայեանէ հիւսակին գրան առջև նստաւ
մտահոգ, ուշ գնելով հնգտաղէզ անցորդ-
ներու քայլափոխներուն։

Կ'գար թէ մուրջը տակաւ կը կոխէր,
բայց եկող չկար։

Յանկարծ ստրոնցաց. երկաւն և ան-
հատատատ ոտքի շշփուտ մ'եկաւ ականջին,
կերկերուն և ընդհատակ ձայնով մը խուն։
Հասկցաւ որ հայրը կուգար։

Արդարև վայրենան մ'եռաբը սա բառերը
լսեց.

— Հա՛, եկե՛ր... եռ։

— Տղաքն ո՞ր են, հա՛յր, հարցուց կոյրը
ոտքի ելլելով։

— Տը...գա...քը, հա՛, ուրդա...քը, սա՛ր
տեսնեմ... ինչ... քերիր։

Գայեանէ զղջահար ձեռքով գրպանը և
տպրակը պարպեց։

— Ա՞յս...չափ, ուրիշ... չունի՞ս։

Եւ սկսաւ թշուառուհին վրան զարիր պրպտել։ Գտաւ հացի այն կտորները զոր պահած էր պզտիկներուն համար, և որոնք մի։ մեներէն աւելի թարմ, աւելի կակուղ էին։

Խեղճ աղջիկն այն ասպիճանի հասած էր որ կը հարկադրուէր իրեն տրուած հացերուն մի մասը առպրակէն գուրս՝ կուրծքին և կռնակին վրայ տեղաւորել, զաղտնապէս իր պզտիկներուն կերցնելու համար։

Մօրը մահէն ետքը «իր պզտիկները» կը կոչէր մանուկները։

—Ա՛հ, ա՛հ, բրաւ զինովը, ասոնք որո՞ւ ... համար... են, լակոտներո՞ւն համար, բայց... մեղք, չպիտի... կրնան ուտել։

Անբաղդուհին ցնցուեցաւ, ինչ բսկ կուզէր այդ մարդը, ինչո՞ւ չպիտի կրնային ուտել։

Մոռցաւ այն հարուածները, որոնք ամէն օր զլխուն կ'իջնէին՝ իրրև թացան իր կրծած չոր հացին, և որոնք անշուշտ չպիտի ուշանային կրկնուելու հիմայ ալ։ Այն բսկէն բան մը միայն իր միտքը կը առնչէր. պզտիկները։

—Ինչո՞ւ չպիտի կրնան ուտել, հա՛յր, հարցուց անձկանօք։

—Հա՛, պզտիկնե՞ր... հա՛, հա՛, հա՛, վանդի... հոս չեն։

—Այո՛, բայց հարկաւ գարտ չեն ուշանար, արդէն ժամանակն անցած է։

—Ե...կան, քիչ մ'առաջ... հոս էին։

Հիմայ ո՞ւր են։

—Ա՛հ, գա...ցին։

—Ո՞ւր։

—Ա՛, չեմ... գիտեր։

—Ինչպէս չէք գիտեր, հայր, բսաւ Գայեանէ ձայնով մը զոր մեղմով հանելու կը ջանար բսա կարելոյն, միթէ դուք ան՝ մը դրկեցիք։

—Ո՛չ։

—Հապա՞։

—Փախան... ի...բենք փախան։

—Փախա՞ն... ա՛հ, խեղճ պզտիկներս, բայց ինչո՞ւ փախան։

Գինովը չ'պատասխանեց։

Գայեանէ կ'սկսէր հասկնալ, բայց կ'ուզէր ապահով ըլլալ. ուստի կրկնեց իր հարցումը.

—Ինչո՞ւ փախան։

—Անանկ...։ Ծեծեցի... փախան։

—Ո՛հ հա՛յր, բրաւ աղջիկը բարկաւթեան ձայնով։

—Կայրը՝ հակառակ ծնողքին ի վեր քաշած տառապանաց, առաջին անգամ ըլլալով զայրացեր կ'զգար իր հօրը՝ այն անսիրտ գազանաբարոյ մարդուն դէմ՝ որ հան առջեր կը կենար։

Անասնացած մարդը բարկացաւ և յառաջանալով.

—Ա՛, զո՞ւն... ա՛... կուզես։

Բայց կայրը չէր լսեր. նա մի միտիայն իր մտածմանն կը հետեւէր։

—Ո՞ւր են հիմայ, հա՛յր, ո՞ւր գացին, գիտե՞ս, հա՛յր։

Մարդը՝ յանկարծ հանգարտած՝ զարիր կ'օրօրէր, ճակատը կը շփէր։

—Այո՛, պատասխանեց թոչմոլով, բայց ... իմ... հետս չ'են...գար։

Գայեանէ ատոր ապահով էր։

—Ես կ'երթամ կը բերեմ, բսաւ։

—Դուն տեղը չես գիտեր։

—Դուք միայն բսէք թէ ո՞ր կողմն գացին։

—Չես... կրնար... երթալ։

—Ինչո՞ւ։

—Շունք կայ... քարեր կան... սախատակներ կան։

—Վնաս չ'տանի, ես կ'երթամ։

—Կիր... կայ... որ այրերու... վրայ է... բաց տեղը։

Թշուառուհին զարաց, հարա մէջը իյնար։

—Դուք չէք տուեր ինձ առաջնորդել, հա՛յր, հարցուց փաղաքշանօք։

—Ես... հա՛ հա՛ հա՛, ե՞ս... հա՛ հա՛ հա՛։

Անհամբերութենէ Գայեանէի արիւնը կ'հոսար. ժամանակը կ'անցնէր, անհրաժեշտ պէտք էր պզտիկները գտնել. մի գաղէ գիշերով կիրին մէջ իյնային։ Այն տանն, ա՛հ, այն տանն աշխարհիս կարծանուն էր, ինքն ալ կը մեռնէր, իսկ՝ որ կ'տարէր եղբայրներուն համար միայն, այն պզտիկներուն համար՝ որոնց վրայ կեղրոնացած էր իր եղբայրական և որդիական սէրը, արծարծեալ՝ կարուտած տանջանաթեան անզարծանելի ճնացած զգայարանաց բոլոր զօրութեամբը։

—Օ՛ն, հա՛յր, երթա՞նք, բսաւ բարկին ձայնով։

Մարդը իր աղջկան ձեռքը բռնեց։

—Լա՛ւ, լա՛ւ, բաւ, երթանք... քանի որ... կ'ուզես. բայց բան, Գայիանէ, ինձի ... տուածդ... զատ բան... մի՛ չունի՞ս։

Կայրը երբէք այնքան մեղմ և կամաց՝ սաստ տեսած չէր իր հայրը. զարմացաւ և միանգամայն ուրախացաւ անոր այսքան շուտ գիջանելուն։ Ուստի ղլխուն կատաղ վար առաւ, ծայրի հանգոյցը քակեց և տուաւ հոն զետեղուած մի քանի կոտոր ղրաՀերը, զոր պահած էր իր սրբերուն պիտոյից համար։

—Ուրիշ... չ'մնա՞ց, հարցուց զինովը, զարհուրելով սրտնեղ սկսելով։

—Ո՛չ, հա՛յր, մօտս յիշատակին վրայ կ'երդնում՝ որ բան չմնաց. բայց ժամանակ չ'անցընենք, շուտ երթանք հա՛յր, կաղաչեմ շուտ։

—Եկո՛ւր, բաւ մարդը և աղջկան ձեռքէն բռնելով քաշեց։

Եթէ նայն միջոցին Գայիանէ կարող ըլլար տեսնելու հօրը զէմքին վրայ փայլող չարագոյ շակ ժպիտը, ինքնագոհութեան զգացումէ զրկեալ անշուշտ պիտի մերժէր անոր հետեկ. բայց ինք կոյր էր և առաջնորդը՝ իր հայրը։

Գինովը իր զատեր ձեռքէն բռնած կը յառաջանար զայլ ի զայլ. ճամբուն վրայ հանդիպած տատղէները, տախտակները քարերու կոյտերը ճարպիկութեամբ կանցնէր և մանաւանդ հոգածութեամբ կոյրը կ'առաջնորդէր։ Հէք աղջիկը երբէք այնքան գիջում չէր յուսար իր հօրմէն, ուստի սրտին խորէն շնորհակալ կ'ըլլար և աղօթքներ կը մրմնջէր սրտէրդի այդ բարեխնամութիւնը շարունակուէր։ Հիմայ իր երջանկութեան բան մը միայն կը պակսէր. այն երկու պզտիկ սիրեցեալ գրտիները շրջանցը տակ ունենալ։

Անոնցմէ վայր մը հատան, ուր լաստակ մը կասուցուած էր և որուն տակ ընդարձակ ու խորունկ փոսի մը մէջ կ'ոյլէր մեծարանակ կիր։

Փոսին տակն զինովը կանգ առաւ և թեւովը բրանտեմոր ճակատը սրբեց։ Կիրին հոտը կ'կրէր կծու և հիւծիչ։

—Ինչո՞ւ կեցաք, հա՛յր, հարցուց Գայիանէ, ա՜հ, ի՞նչ անուտանելի հոտ։

—Հիմայ կանցնի, աղջիկս, հիմայ կանցնի։ Ուրիշ բան չունիս ըսիր, անանկ չէ։

—Ուրիշ ի՞նչ, հա՛յր։

—Սատկ։

—Ո՛չ, հա՛յր. ունեցածս տուի. բայց երթանք, կ'աղաչեմ։

—Լա՛ւ աղջիկս, լաւ։

Մարդուն զինովութիւնը անցած էր, ինչպէս որ շատ անգամ կը պատահի մեծ փառանդներու առջև։ Կոյրը սքանչացած էր։ «Աղջի՛կս» բա՞ռը, այն մարդուն քերանը, աշխարհ տակնուվրայ եղած ըլլալու էր։

Բայց այդ ուրախութիւնը վայրկեան մը մնալու չունեցաւ. յանկարծ զայ թէ մէջքէն կը բռնուէր և օդին մէջ կը նետուէր։

—Տէ՛ր Աստուած, մայրի՛կ, ազատեցէք թշուառս հոն։

Պահ մը եռացեալ կիրին մէջ տատանում մը տեղի ունեցաւ, բայց մ'նաքը ամէն ինչ իր տեղի հանգարտութիւնը վերստացաւ։ Կիրը կը մնար, տատերը կը շաղային, բնութիւնն անփոփոխ էր։ Միայն զինեմորութեան արկիւնքներէն մին կատարուած էր. որպէսզի ոգանը անհերութեացած էր։

Նոյն պահուն երկու պզտիկ տուներու սարսափահար, որոնցմէ փոխչիրը նշմարուեցաւ։ Ասոնք զինովին զաւակներն էին, կոյր Գայիանէին «պզտիկներն» էին, որոնք ատատղէներու, գերանտներու միջև պահուրտած ակնատես եղած էին այս անտարբեր ոճրագործութեան և կը փախչէին հեռու՝ հօրենական յարկէն շատ հեռու։ Այլեւ զանոնք տեսնող չեղաւ։

Մայր եկեղեցւոյ աշակերտները բուսական օրեր յուսացին, այլ ի զուր, գարձեալ տեսնել իրենց սիրելի եղած կոյր աղջիկը։ Տիկնիկութիւն ամենով հանկարծ որ հիպակը լքուած էր և փրած։

Խեղճ կոյր աղջիկն մնաց, կրացած մարմնոն ու ոսկորները ծառայեցին սպիտակեալ սենեակներ, որոնց մէջ կը բազմին և կը պարեն թիրեա ատանք, որոնք անոր ճերմակ աչքերն և կեղտուած զէմքէն գարշելի երեսներն էր զարձնելու և քիչ մ'անոնցմէ կը թրջեն։

Ա. ՊԱԼԵԱՆ

## ԴԺԲԱԽՏԸ

Որմէն վար է կախուեր,
Հովերէն տարուբեր,
Օրօրոցն երկրուն,
Ուր բունէ զոյգ թռչուն։

Տասնութիւնդ էր օրուան,
Պաղպաջուն լուսընկան,
Ճեղքեցան ամա՛ ծուխ,
Դուրս ելան ծագք երկուք։

Ձագերուն հազիւ հազ
Կ'երևէր աղուամազ,
Շո՛ւտ բուսան փետրազգեաց
Թևք, ազիք տատրակաց.

Տատրակիկ, փարուժան,
Քոյր, եղբայր անբաժան,
Վուվուներ կ'արձակեն,
Սրտերը կը մոգեն։

Սրտերուն մեր տրտում
Խինդն եղաւ անպատում,
Երբ բոյնէն հանեցինք
Երկուքն ալ սիրեցինք.

Իջուցինք շուտ ի բոյն,
Որ մայրը ծագերուն
Գտնելով թափուր զայն
Չ'արձակէր ողխուր ձայն։

Ծընողքին հրաժե՜ր...
Բերին բուն պալէնի.
Չե՛ ի նե բոյն մտան,
Ձագեակներն այլ գըտան։

—Ճի՛ւ, ճի՛ւ, ճի՛ւ, մնչեցին
Ծընողացն ի պարծին.
Նշմացան, բոլէ բոլ,
Քուն ընկան անվրդով։

Երեկոյ՝ մօտենայր,
Զրկայրին հայր ու մայր,
Ա՜խ, անգութ սև ագռաւ
Ձագուց մին առաւ թռա՜ւ.

Վայնասուն ծըգեցինք
Ետևէն վազեցինք,
Ագռաւին, մինչև որ
Թողուց զայն վիրաւոր.

Թևին տակ, ոտից մին
Արիւնոտ, գլուխ մարմին
Կը դողար տակաւին
Առ անի ագռաւին։

Բայց կ'ապրէր. ողջ էր այն.
Օրհնեա՜լ են ձեռք որ՝ զայն
Որսողէն փրկեցին,
Բունիկը դարձուցին։

Վերջին օրն էր այն օր.
Նորածնին հարկ էր որ
Թռչէին... ո՜հ, բանի՜ն
Տաս հոգս երանին...։

Առաւօտ մ'էր զուլիկ
Կը փըչէր զեփիւռիկ.
Մայրիկը կը ժպտէր,
Կը ժպտէր վերէն Տէր։

Թռչնիկուն ամենն էր,
Մանէր մօյրն ու եղնէր.
Արևուն տակն արդէն
Մին թռչէր հանդէն։

Նոյնգայ, վիրաւոր
Ձագուկը մենաւոր
Մընացած բունիկը,
Զըզած էր ձայնիկը։

Իսկ ոստոց մէջ պալար
Թափառիկ ու մոլար,
Գետափին մերթ թռչէր,
Մերթ հանգչէր, հոգը չէ՛ր։

Հոգը չէ՛ր Ներն ընկեր
Որ բունին մէջ ընկեր,
Ջուր փորձէր առնուլ թև,
Կ'անիծէր կեանքը սև։

Իսկ ծնողքը բազմագութ
Բերին բուռ, բերին կուտ,
Դրոշմելով բիւր համբոյր
Ձագուկին սիրաբոյր,

Բայց զո՜ւր էր, անօգուտ,
Չէք ծնողքին այնքան գութ.

Ջազուկն էր վիրաւոր,
Թանգուրկ, սրգաւոր.

Բայեկն զայն վեր առին,
Գգուեցին սիրեցին.
Այնպէս որ թե առաւ
Քիչ օրէն, ո՞ն, թրա՜ռ...։

Այլ, ինքզո՞վ ու ժամուն,
Դարանէր սև կատուն,
Խլեց հէքն ու տարաւ
Յօշոտեց ու կերաւ։

Ո՞վ ծագուկ տարաբաղդ,
Այսպէ՞ս է վճռեր բաղդ,
Բընութեան է օրէն,
Հեր զրկի ինքզօրեն...։

Ս. ԲԻՒՐԱՏ

# ԿԻՆԵՐԸ

Ահաւասիկ կիներուն վրայ յայտնուած գլխաւոր կարծիքները, նշանաւոր հեղինակներու կողմէ։

Ժ. Ժ. Ռուսօ չէր սիրեր կիները, որոյ համար տուած է այս հռչակաւոր սահմանը. «Կին մը մեծ տղայ մ'է լոկ»։

Գերմանացի Քանդ իմաստասէրը՝ աւոր կը պատասխանէ. «Եթէ չ'պիտի ուզէի, ոչն իսկ եթէ աշխարհի ոսկիները տային ինծի, ըսած իսկ ըլլալ ինչ որ Ռուսօ փաստելու ելեր է»։

Ըստ Պրիմմել գրագէտին, որ աւելի սաղմոսէր խառնուածք մ'ունի, կինը միշտ զէնքի տակ պատրաստ գտնուելու է. «Անարդուզարդ կին մը, անհամազգեստ զինուորի մը կը նմանի»։

Նրբամիտ հոգերան մը, Պ. տը Ֆէոուիէռ, այս դատաստանը կ'ընէ դեղեցիկ սեռին. «Կին մը պիտի յուսահատէր, եթէ բնութիւնը ստեղծած ըլլար զանի այնպէս, ինչպէս նորաձեւութիւնը զայն կը պճնէ»։

Զմեն անոնք որ համոզուած են Աստուածաշնչին, կը յանձնարարեմ կարդալ Սողոմոնի Ժողովողին հետեւեալ պատգամը. (Գլ. Է, հատ. 27–30).

Եւ գտի ես զնա, եւ ասեմ, թէ դառն է քան զմահ կնաւն հանդերձ. որ է որս եւ թակարդ արտի նորա, եւ կապանք ի ձեռս նորա, բարին առաջի երեսաց Աստուծոյ զերծցի ի նմանէ, եւ որ մեղաւորն է՝ ընկալեսցի ի նմա։ Ահա զայս ասեցայն գտի, ասէ Եկեղեսիաստէս. մի միոյ գտանել խորհուրդս, զոր խնդրեաց անձն իմ եւ ոչ գտի. այր մի ի հազարաց գտի, քայց կին՝ ամենեւին ոչ։

Այս բնագրին և ուրիշ այսպիսիներու հիման վրայ Տրէնտէի ժողովը —Աստուածոյ Տրէնտէ քաղաքին մէջ տեղի ունեցաւ 1545–63, դատապարտելով բողոքականները— «Մեծ կանանց» ահռելի պատգամն արձակեց և իր համբաւեալ գիտութեան փորձը տուաւ, կիները հոգիէ զուրկ հռչակելով։

Ռուսական առած մը կ'ըսէ. «Կինն երկու անգամ սիրելի է. 1.—երբ ծնն կը մնանէ, 2.—երբ անկէ դուրս կ'ելնէ»։

Երկրորդ ռուսական առած. «Կնոջ մազերն երկայն են և խելքը կարճ»։

Ռուսական երրորդ առած. «Շունը աւելի խելացի է քան կինը. գոնէ անիր տիրոջ դէմ չ'հաչեր»։

Ինչպէս կը տեսնուի, ռուսական առածները չափազանցօրէն անտեսած են կնոջ գերազդածութիւնը։

Ահաւասիկ երկու խրատներ, Պալզաքէն որ մոռնադէան էր.

1.—«Խոյս տուէք իր առաքինութեան վրայ ճառող կնոջմէն»։

2.—«Ճարպիկ մարդիկ պարտին նախ այդ՝ ըսել կիներու բոլոր քմայքներուն, և ապա թելադրել անոնց ոչի շարժառիթները, թողլով որ անոնք ուղածնուն պէս փոխեն իրենց գաղափարները, որոշումներն ու զգացումները։»

Տիկին տը Սթաել Նաբոլէոնի կը հարցնէր թէ՝ աշխարհի կիներուն

մէջէն, ողջ կամ մեռած, ո՞րը կը համարէր առաջնակարգը. — Այն որ ամենէն աւելի բազմածին եղած է, պատասխանեց նա։

Նաբոլէոն այն ատեն կը խօսէր իբրեւ զօրական որ միշտ պէտք ունի զօրքերու։

Թէօֆիլ Կօթիէ, կիներուն համար ընդհանրապէս աղէկ տրամադիր, օր մը չափազանց սրտնեղ վիճակի մէջ գրեց. «Կնոջ մը կոչմէ կ'սպասուի ամեն բան և գլխաւորապէս անտեղին (absurde)»։

Արար փիլիսոփայի մը գրչին արտադրութիւնն եղող այս սահմանին ալ համն առէ՛ք. «Բժշկաց կարծիքով, կինն Աստուծոյ ձեռքով կազմուած բանական արարած մ'է, մարդուն ընկերուհին ըլլալու համար, որուն տիրուհին եղած է Եւրոպայի մէջ, և գերին՝ աշխարհի միւս չորս մասերուն մէջ»։

Օրնան, անկեղծ հիացող մը կանանց, կ'ըսէր. «Կնոջ մը պարտականութիւնը՝ գեղեցկութիւնն է».

Քամբի կանոնագիրքէն. «Կիներ կան որ կը նմանին զկեռներու (մուշմուլա), որք քանի ծերանան, ա՛յնքան լաւագոյն կ'ըլլան»։

Գերմանացին Միշլէ կը պաշտէր կինը, որուն ջատագովութիւնը կ'ընէ։ Մեծ տաղանդով ու ձիրքով կը պաշտպանէ նա տկար սեռը։ Ահաւասիկ իր քանի մը կարծիքները «Սէր» անուն իր գեղեցիկ երկէն մէջէն. «Կնոջ բովանդակ յիմարութիւնը՝ մարդուն մէ՛կ տխմարութիւնն է»։

«Կիներու երջանկութիւնը՝ հնազանդիլ է. անոնք կուզեն որ մարդը ուժեղ ըլլայ. հրամայողները կը սիրեն և չեն արհամարհեր հրամանատարին արիութիւնը»։

«Ի՞նչ է կնոջ նպատակը, անոր պաշտօնը. առաջինը՝ սիրել, երկրորդը՝ մէկ հատ սիրել, երրորդը՝ միշտ սիրել»։

«Ծեր կին երբեք չ'կայ. բոլորն ալ, ամեն հասակի մէջ, եթէ սիրող են ու բարի, անհուն փայլկեանը կուտան մարդուն։

Ո՛չ Միշլէի և ո՛չ ալ միւսներուն խօսքերը իբր Աւետարանի պատգամ կուտամ ձեզի, բայց կարծեմ թէ զոր ծնականներուն մէջ գոհ կըլլայ մարդ Վիկթոր Հիւկոյի պէս մտածելով.

Գիտէր Աստուած թէ ի՛նչ յարմար
էր մարդուն:
Մօտը դրաւ կինն եւ երկինքը շատ
հեռուն:

Ի՞նչ կը խորհիք «Հոգեբանութիւն ամուսնութեան»ի հեղինակին այն իրաւագոյն գիտողութեան վրայ. «Մարդ մը որչափ ալ չարաբարոյ ըլլայ, երբեք չպիտի ըսէ կիներուն ո՛չ այնչափ լաւ ո՛չ այնչափ գէշ, որչափ անոնք կը խորհին իրենց համար»։

Գիտենք որ Պալզաք սիրական հեղինակն էր կանանց, որք իրեն երախտապարտ էին այս բանին համար զոր ըսել ուզած էր իրենց մասին.

«Յայտնի է թէ բոլոր կիներուն մէջ մնացի են»։

Թարգ. ՎԱՀԷ ՏՕԲ.Թ ՍԱՏԻՕ

---

## ԱՐԱԲԿԻՐԻ ՈՐԲԱՆՈՑԸ

Արաբկիրի Որբանոցին ի նպաստ Արժ. Տ. Եղիկ Քհնյ. Պալունիի նախաձեռնութեամբ կատարուած հանգանակութեան առթիւ՝ Հանդիսիս նախորդ թիւին մէջ հրատարակուած էր իր մէկ նամակը, որուն վերնագիրը, փոխանակ "Որբանոց Արաբկիրի" նշանակելու, սխալմամբ գրուած էր "Որբանոցաց ընկ. Արաբկիրցւոց"։ Ահաւասիկ յիշեալ հանգանակութեան արդիւնքն ու նուիրատուաց անունները.

| | Դահ. | ղրշ. | փրլ. |
|---|---|---|---|
| Եղիկ Քհյ. Պալունի | | 50 | |
| Ազն. Պետրոս Էֆ. Կարապետեան | | 487 | 20 |

| | |
|---|---|
| Մեծ. Տեառք | |
| Եղեազար Եագուպեան | 154 12 |
| Մհ. Սարգիս Մելիքեան | 154 12 |
| Նշան Մալումեան | 100 |
| Առաքել Պէրպէրեան | 50 |
| Յովհաննէս Ս. Թէրզեան (Ջիպութի) | 195 |
| Մ. Մինաս Գմպմեան | 40 |
| Մ. Վարդան Շամլեան | 40 |
| Մ. Կարապետ Տ. Ադամեան | 20 |
| Մ. Սարգիս Միրանեան | 20 |
| Նազարէթ Աղազարմ | 20 |
| Մ. Փիլիպպոս Հայլէջեան | 20 |
| Աբրահամ Սարգիսեան | 40 |
| Թովմաս Բրուտեան | 20 |
| Սարգիս Դարբինեան | 20 |
| Եղբարք Շահրօզեան | 50 |
| Լեւոն Ս. Միրիճանեան | 20 |
| Յակոբ Ս. Ժամգործեան | 20 |
| Կարապետ Երզնկացեան | 20 |
| Միսաք Վարդանեան | 20 |
| Միսաք Երզնկացեան | 20 |
| Գէորգ Հացագործ. և Ս. Զուրիկեան | 20 |
| Կարապետ Գմպմեան | 20 |
| Կարապետ Վարդանեան | 15 |
| Նշան Բրուտեան | 15 |
| Արամ Հայլէջեան | 15 |
| Խաչատուր Ժամգործ. | 15 |
| Մ. Մարտիրոս Տ. Մարկոսեան | 10 |
| Կոզմաս Մանկիկեան | 10 |
| Մ. Յովհաննէս Քիւչիւկեան | 10 |
| Նշան Հաճաթեան | 10 |
| Մ. Աւետիս Սուվալեան | 10 |
| Փիլիպպոս Խնէքճեան | 10 |
| Մ. Առաքել Վարդանեան | 10 |
| Յարութիւն Սուլթալեան | 10 |
| Սարգիս Փալանճեան | 10 |
| Դանիէլ Մանկիկեան | 10 |
| Ոմն | 10 |
| Սարգիս Մարտիրոս Ժամգործ. | 10 |
| Եփրանոս Ժամգործեան | 10 |
| Մ. Թորոս Մանուկեան | 10 |
| Գէորգ Պէրպէրեան | 10 |
| Աշոտ Բրուտեան | 10 |
| Երուանդ Գավազեան | 5 |
| Մ. Սարգիս Քիւչիւկեան | 5 |
| Նազարէթ Վարդանեան | 5 |
| Մկրտիչ Եզիկեան | 5 |
| Մ. Յակոբ Ջնքուշցի | 5 |
| Մովսէս Ֆէրէշէթեան | 5 |
| Կարապետ Սուլթանեան | 5 |
| Մինաս Պէրպէրեան | 5 |
| Ոմն | 5 |
| Գրիգոր Հայլէջեան | 5 |
| Զաքար Տէվլէթեան | 5 |
| Համագումար | 1901 4 |

## ՋԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

Կիլիկիոյ կաթողիկոսական ընտրութեան կնճռոտ խնդիրը կարգադրելու հրամանը կ'արձակուի, նորընտիր կաթողիկոսը Տ. Գրիգորիս Սրբազան Ալէաթճեան կը վախճանի։ Ինչ' զուգադիպութիւն մը, որ խորհիլ կուտայ Դրան ներքին խարդաւանանքներու լաւատեղեակ մտքերու. տարաձայնութիւններ շատ կան այդ մասին. բայց ու ստոյգ է թէ՝ 3 տարիէ ի վեր ձգձգուած խնդիր մը, ինչպէս է Կիլիկիոյ կաթողիկոսութեանը, օրինաւորապէս ընտրեալ կաթողիկոսին մահուամբ հիւանդութեան մէջ կը գտնէ իր բնական լուծումը, տարաբաղդ Սրբազանին մահուա՛մբը։ Խե՜ղճ Ֆրանսա, այս ո՛րքան երկար տևեց տագնապդ. եթէ ժամանակին՝ Բ. Դրան յանձնէիր Տրէյֆիւսի դատը, անմիջական լուծումը կ'ստանար. դեռ դատապարտեալը Սատանայի կղզին չ'հասած, Ովկիանոսին մատաղ կ'ըլլար, ինչպէս եղան ճարօնի ջրերը նուարկող Խրօղոսյի հարիւրաւոր երիտասարդ թուրքերը։

—Ջէյթունէն ստացուած վերջին լուրերը՝ կը նկարագրեն լեռնականաց արդի ողեխարշ կացութիւնը, բնաջնջող սովին անելի ներկայութեամբ. սակայն սովէն աւելի սոսկալի վտանգ մը կ'սպառնայ

վրդովելու այդ դժբաղդ ու արի ժողովրդին խաղաղութիւնը։ Տեղային իշխանութիւնք կը պնդեն որ յեղափոխական կուսակցութեան մը կողմէն այս օրերս հոն դրկուած է գործիչ մը, որ ինքզինք կը պահէ և որուն ծերբակալումն անհրաժեշտ նկատուած է կառավարութեան կողմէն։

—Հայերն սկսած են Կրեսէ գաղթել խմբովին։ Ամեն օր հոն կը դիմեն բազմաթիւ հայ գաղթականներ մեծ մասը հարուստ։ Եղզիին զանազան կողմերը կալուածներ կը գնեն վերջնականապէս հոն հաստատուելու մտքով։

—Ռուսիոյ ու Բ. Դրան միջև համաձայնութիւն մ'եղած է թուրքևռուսական սահմանագլխուն վրայ կարգել մնայուն պատուիրակ մը, որուն պաշտօնն ըլլայ քուրտերու բռնաբարութիւններն արգիլել, որևէ կապ մը չունենալով քննիչ ցանձնախումբին առաքումին հետ, որուն եպատակն է դարձեալ՝ վերջերս այն կողմերը գործուած քրդական խժդժութիւններու քննութիւնը։

—Զէյթունի վաղեմի զինուորներէն Տիար Յարութիւն Զագրեանի մահուան գոյժն ի խոր սուգ համակեց մանաւանդ իր հայրենակիցները, որոց շատերը ականատես վկայ եղած են ողբացեալի 1878–79 պատմական քաջագործութեանց։ Արտասահմանի թերթերուն մէջ, որք առհասարակ յարգանք ընծայեցին անոր գերեզմանին, բացառութիւն մ'է Նոր Կեանքը, որուն խմբագիրը, Տիար Ա. Արփիարեան, ակնդէտ կ'սպասէր կարծես այս մեծանուն հայուն մահուանը, որպէսզի երկրորդ օրը՝ ծաղրէր անոր գերեզմանն ու անարգէր կեանք մը որ, հակառակ քանի մը շեղումներու, հայրենեաց համար զոհուելու սահմանուած էր։

—Վերջերս՝ Եւրոպիոյ օսմանեան 4 դեսպաններուն ի Պոլիս հաւաքումը և ինքզինքերդին անյապաղ սպասուիլը՝ զանազան ենթադրութեանց առարկայ են դարձեր։ Որաւ է որ Եալտզիմէջ մեծ մտահոգութիւն կ'առնեն հայերուն և երիտասարդ Թուրքերուն յեղափոխական ձգտումները, բայց դա միակ պատճառը չ'կրնար համարուիլ դեսպաններու հաւաքումին. մէկէ աւելի պատճառներ կան որոց առաջինն է ելմտականը. անօթի, անօթի, փախեր եկեր են, ո՛վ գիտէ որչափ տտեն է ի վեր ամսական չէն ստացեր խեղճերը։ Ո՞ւմանք ալ կ'ենթադրեն թէ՝ դեսպաններուն Պոլիս գալը նշան է թէ՝ արդի վարչական ձևը պիտի փոխուի։

—Բերկրութեամբ կ'իմանանք թէ՝ իր ազգանուէր գործունէութեամբը ծանօթ Տօգդ. Տիգրան Ղնֆիլեանն, որ ժամանակէ մ'ի վեր ի Փարիզ կը զբաղիր մանրիբէր աչքի հիւանդութիւնները, հաչակաւոր ակնարոյժներու քով, այս անգամ վերադարձած է Աղեքսանդրիա, ուր պիտի հաստատուի,

---

*Զր ցիշուիի ինդիրը գայթակղալից հանգամանք մ'առաւ. ժողովական ու ժողովուրդ մենամարտի բռնուած են։ Յաջորդ թուով պիտի պարզենք մանրամասնութիւնները դէպքերուն, որք ազգին պատիւ չեն բերեր և դատապարտելի են։*

---

## ԱԶԳ

*Կարեւոր է յայտարարել թէ՝ մեր բաժանորդաց մէջ եղան այնպիսիներ որ Հանդիպես մինչև 10դ թիւն ընդունելէ ետք, առանց վճարումի դադրեցուցին իրենց բաժանորդագրութիւնները. անոնցմէ վարմանք մը զոր կը պարտաւորինք հրապարակել և հրաւիրել զիրենք որ հաճին իրենց* **Վ.ԵՅԱՄԱՍԵԱՅ** *պարտքը դրկել մեր հասցէին։ Նոյնպէս Ա. Վեցամեան ուարտեան, թերթ պիտի ուղղեն* **ՍՅՆ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԸ ՄԻՍՅՆ** *որ մինչև Բ. Վեցամեանի մասրը* **ՎՃԱՐԱԾ Կ'ԸԼԼԱՆ** *իրենց բաժնեգիրը։*

Le Gérant, J. MUNEIR